

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԼԻՅԵՆՁԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բոնադակությամբ՝

«Սույն օրենքը չի տարածվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 2.1-րդ մասում նշված գործունեության տեսակների լիցենզավորման հետ կապված հարաբերությունների նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը «օրենքով» բառից հետո լրացնել «, «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում՝

- 1) առաջին և երկրորդ պարբերություններից «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի,» բառերը հանել.
- 2) չորրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 43-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասի աղյուսակի 4-6-րդ բաժիններն ուժը կորցրած ճանաչել.
- 2) հոդվածը լրացնել 2.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝
«2.1. Լիցենզավորման ենթակա գործունեություն են համարվում նաև բանկային գործունեությունը, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորների, Կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունները, ինչպես նաև արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքը, արտարժույթի առուվաճառքը, արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպումը, գրավատների կազմակերպումը, վարկային բյուրոյի գործունեությունը, ապահովագրական բրոքերային գործունեությունը: Ընդ որում, օրենքով կարող է սահմանվել, որ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված որոշ անձինք սույն մասով նախատեսված գործունեության որոշ տեսակներով կարող են զբաղվել առանց լրացուցիչ լիցենզավորման:»:

3) 3-րդ մասը «աղյուսակում» բառից հետո լրացնել «և 2.1-րդ մասում» բառերով:

Հոդված 6. Մույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: